



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ**

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երևան

30 նոյեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝

Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝

Ե. Խունդկարյանի

Է. Շաթիրյանի

Քննության առնելով «Թեղուտ» ՓԲԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Թեղուտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Դիմող) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2022 թվականի նոյեմբերի 15-ին)՝ խնդրելով.

*««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը՝ հրավակիրառ պրակտիկայում տրված*

*մեկնաբանությամբ, [ճանաչել] Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:*

2. Ներկայացնելով թիվ ՎԴ/7612/05/17 վարչական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը փաստում է, որ նշված վարչական գործով Վճռաբեկ դատարանի կողմից 2022 թվականի մայիսի 19-ին կայացված որոշմամբ իր նկատմամբ կիրառված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ակնհայտ միջամտություն է տեղի ունենում իր՝ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասով և 60-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված տնտեսական գործունեության ազատության և սեփականության հիմնական իրավունքների նկատմամբ:

Դիմողը նշում է, որ «(...) Վճռաբեկ դատարանը Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում հաղորդել է հակասահմանադրական բովանդակություն առ այն, որ մասնավոր իրավահարաբերություններում պետությունն իրավասու է պայմանագրային խախտումներն արձանագրել և դրա համար պատասխանատվություն սահմանել Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով վարչական ակտով՝ առանց օրենքով նախատեսված հատուկ կանոնակարգումների առկայության: Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ուղղակի հակասության մեջ է մտնում նաև Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1530 որոշման հետ (...):»:

Ըստ Դիմողի՝ «(...) Վճռաբեկ դատարանը Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը (...) դիտարկում է որպես իրավական հիմք՝ մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում ստուգումներ անցկացնելու ու պատասխանատվության վերաբերյալ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ: Արդյունքում՝ մասնավոր անձինք, պետության հետ մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում պայմանագրեր կնքելիս, պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ վեճ առաջանալիս, պետք է հաշվի նստեն այն հանգամանքի հետ, որ վեճը լուծվելու է ոչ թե ընդհանուր իրավասության դատարանում՝ կողմերի հավասարության պայմաններում, այլ

գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմից միակողմանի իշխանական գործողությունների կատարմամբ, որոնք միայն հետին թվով (post factum) կարող են դառնալ դատական քննության առարկա՝ վարչական դատարանում»:

Դիմողը փաստում է, որ մասնավոր և հանրային իրավահարաբերությունների տարանջատման պայմանների նման փոփոխությունը հանգեցնում է տնտեսական գործունեության ազատության խախտման, որով հիմնավորվում է վիճարկվող օրինադրույթի և հիմնական իրավունքի խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապը:

Դիմողը նշում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, խաթարում է նաև իր՝ Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը, քանի որ գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ենթարկվում են անհամաչափ և անարդարացի սահմանափակման: Դիմողի պնդմամբ՝ տվյալ մեկնաբանության հետևանքով մասնավոր իրավահարաբերություններում հնարավոր է դառնում անձին պատասխանատվության (տվյալ դեպքում՝ նյութական) ենթարկել վարչական ակտի միջոցով: Ըստ Դիմողի՝ նման պարագայում ինքը չի կարող նախորոշել իր նյութական միջոցների տնօրինումը, քանի որ մշտապես առկա է լինում ստուգումներ անցկացնելու և դրա արդյունքում միակողմանի կերպով վարչական ակտ ընդունելու հնարավորություն՝ սահմանելով վճարման պարտականություն, որն էլ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլխի շրջանակներում կարող է դառնալ հարկադիր կատարման հիմք:

**3.** Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

*ա/ երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,*

***բ/ երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,***

*գ/ երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե **դիմողն իրավասու չէ փվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:***

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «(...) «Սահմանադրական դատարանի

*մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:*

Միևնույն ժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:*

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:*

Սույն դիմումի, ինչպես նաև դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում հարկ է արձանագրել, որ սույն գործով Դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/7612/05/17 վարչական գործով 2022 թվականի մայիսի 19-ին կայացրած որոշմամբ բավարարել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքը, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Այսինքն՝ *սույն գործն ուղարկվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ նոր քննության, և ներկայում դեռևս քննվում է դատական կարգով, հետևաբար՝ Դիմողը սույն գործով չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, ուստի Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:*

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Թեղուտ» ՓԲԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



Ա. Թունյան

Ե. Խունդկարյան

Է. Շաթիրյան

30 նոյեմբերի 2022 թվականի  
ՍԴԴԿՈ-66